

հակայ: Ի Հաղարայ ծառայք են, յեկեղեցւոջ զազատութիւն ստանան: Սասայ հալածիաց զնոսա, ծագումն նորին ի նմանէ փրկեաց զնոսա: Զի ո՛չ ժառանգեցին ընդ Սահակայ(2), ընդ տեանն Սահակայ ժառանգեցին: Ի ժարէ ծառայութիւն(3) ծընեալ են, յեկեղեցւոյ յազատութիւն ծնանին: Մկրտութիւն ազատառնմ, ծնանի զնոսա ազատա: Ծոայլելոցն նոցա չի՞ք բաւ: Հաստատնոց նոցա չի՞ք համեմատ: Եկին շոայլեալքն ի կորսւած մեղ: Եկին հաստատունքն, ի կորսնս մեր: Եղին մեղ փեսաք պղղծք նոցա, եւ ի կշտամբութիւն նրս ցածունք նոցա: Վերինք են եւ ներքինք, ո՛չ զոն ի նոսա միջինք: Հաճոյք նոցա յերկինս, եւ ազականալք նոցա յանգճեցա:

Հրոպարակեաց (Շար.) Գ. Յ. Մ.

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԿՈՒՐԵԱՆ ԶՈՐԵԼԵԱՆ

Ն. Վ. Պօղոս Փաշա Նուպար, պատասխանեցոյ Յրկնն. Կղննն. Յնծմղլի. Պատուակոյ նախագահ Գեր. Թորգոմ Սրբազանի նամակին, 300 Անգլիական ոսկի նուիրած է ի նպաստ Գուրեան Մասնազարանի շինութեան, շատ համակրանք գրութեամբ մը:

Գուրեան Յորեկանի Կեդրոնական Յանձնաժողովին ուղղուած պաշտօնագրոյ մը կը հաղորդուի թէ Մանչէսթրի մէջ, Գուրեան Ղեւոնդ Սրբազանի նախագահութեամբ, կազմուած է Յորեկանական Մասնախումբ մը, որուն անդամներն են. Տիարք

- Հրանդ Պաղբեան, Ասեմայե
- Գառնիկ Յնայեան, Ասեմայլի
- Մարքո Պաղբեան, Գանձայե

Մասնախումբը արդէն ձեռնարկած է հանգանակութեան, ի նպաստ Գուրեան Մասնախումբի շինութեան:

Քայլիֆօսնիոյ Առաջնորդ Գարեգին Սրբազանի նախաձեռնութեամբ, մշակուած է Յայաստանի մը, ատենու համար Գուրեան Յորեկանի Քալիֆօսնիոյ Առաջնորդութեան երեք գլխաւոր քաղաքներուն մէջ, Ֆրէզնօ, Լոս-Անձելէս եւ Սան-Ֆրանցիսկօ:

Տքթ. Վ. Թորգոմեան, Սրբազան Յորեկանի պատանութեան գաղտնական ընկերը, Փարիզէն, Գուրեան Մասնազարանին նուիրեց 312 երեսնոց Ձեռագիր մը:

— Օրէնք եւ սովորաբար Ներաչեցուց աւելցնուիլ ի Պօղոս: Վրդայիտէ Մեղիկեանց Առաջնորդէ, բանիւք Աստուածաւանց գրոց:

Համառօտայ խնամակութեամբ ի Նիկողայոս: Մտտեանց, որ երեմն արքի երայեցի, եւ յետ ուղղափառ նուրմական. յաւելեալ բոլոր միոյ առ ձեռքէն արգն երայեցայ. բարգմանեալ յիսպացոց ըզրէ ի հոյ բարբառ, աշխատախումբեամբ Հօր Կոնստանտին վրդայի, աշակերէ Տոն, Մխրատայ վրդայի Արքանայ կոչեցելոյ, յամի Տեառն 1760, իսկ քս Հայոց բուականին ՌՄԹ. եւ անի յեկոց օրինակայ անցելոյ գաղափարէ օրինակայ արգէն ունեմն նուստ զպի ի բաղձան իւր: Ի պատրաստութեան Կասակոնուպոյ Տոն. Մեխանեանի Աւել Եղիակոպախ: Ի Երայիլ, յամի Տեառն 1834:

Պերուի թեմին Կաթողիկոսական Փոխանորդ Գեր. Եղիշէ Եօպ, Կարտան, Ս. Աթոխ Մասնազարանին նուիրեց Չորս Ձեռագիրներ, Առասնայի եկեղեցիներէն մնացած յիշատակներ, մէկ ձագոց եւ երեք Աւետարան:

Ք Իրազի Կասախորութեան Առաջին Եղևմտադէտ-Քննիչ (Chief Financier Inspector) Վսեմ. Ոսկան Պէյ Մարտիկեան, արձակուրդոյ Պաղտատէն երազա երթալու առթիւ, երուսաղէմէն անցաւ եւ մնաց երեք օր (Մայիս 16-20), երկիցս այցելեց Ամեն. Ս. Պատրիարք Հօր, մասնաւորապէս հետաքրքրուեցաւ ընծայարանոյ եւ ժառանգաւորաց վարժարանոյ: Լուսարարապետ Գեր. Տ. Մարտոյ Սրբազանի ընկերակցութեամբ տեսաւ Ս. Քաղաքին շրջականերն ու պատմական եւ գլխաւոր վայրերն Ն. Սրբազանութիւնը Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէն փոխադարձ այցելութեան տուաւ Ոսկան Պէյի, Ալէնպի Օթէլին մէջ, եւ արջերթ մաղկեց իրեն:

Հաճոյքով խնայանք որ Իրազի վեհապետը Մէլիք Ֆէյալ՝ Պէյութեան աստիճանը շնորհած է Նորին Վսեմութեան:

Ք 25 Մայիս 1929, ճԲ. երկիցեան ժամը 3 ին տեղի ունեցաւ քաղաքիս Անգլիական Աէնթ-ձօրձ վարժարանի ընդշախարհի հանդէսը, եւ 1 Յունիս Շարաթի երկիցեան ժամը 3 ին բացուեցաւ նոյն Հաստատութեան տարիկան Պաղարը: Այս երկու հանդէսներուն ներկայ գտնուեցաւ Հոգ. Տ. Կիւրիկ Վրդ. Խարայեկեան, ի զիմաց Պատրիարքարանին:

Ք 28 Մայիս 1929, ԳՇ. երկիցեան ժամը 4.30ին, Պաղտատէնի Բարձր Գոմբէր Ն. Վ. Սըր ձօն Բօպըթ մէկնաւոր իր ապարանքին մէջ թէյասեղան

(2) Բաւրդ ընդ Սահակայ ի լուսնոցս յաւելալ ի ձեռն ուղղիլին:
(3) Թերեւս ուղղիլի՝ ի ծառայութիւն:

մը տուաւ ի պատիւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր: Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Խորայէլեան ընկերացաւ Ն. Ամեն. Սրբազնութեան:

30 Մայիս ԵՇ. տեղի ունեցաւ Պաղեստինի միջկրօնացական ըմբռնապաշտօն Ինկլիտ պիօրիմնկ Գըլըպի խաղաղաշտին վրայ, որուն մասնակցեցան նաև ժառանգաւորաց վարժարանէն չորս հոգի, և վագրի երկրորդ մետալը շահեցաւ Գրգ դասաւարանի աշակերտներէն Աերովըէ Մարտիրոսեան: Այս ըմբռնապաշտօն մասնակցեցան քսան դրօշակներ:

Անգլիոյ վեհափառ ձՐՁ Ե. Թագաւորին ծննդեան տարեդարձին առթիւ, 2 Յունիս 1929, Կիրակի առաւօտեան ժամը 12 ին Գոհարանական մասնաւոր պաշտամունք մը կատարուեցաւ Անկլիքան Մայր Եկեղեցոյ մէջ: Ըստ հրաւերի երուսաղէտի Անկլիքան Եպիսկոպոս Տ. Մէկիննէս Սրբազանի, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, հետն ունենալով Տ. Կիւրեղ Վարդապետը, ներկայ գրտուեցաւ այս պաշտամունքին:

Հեռեկալ օրը, 3 Յունիս, ԲՇ., Նորին Ամենապատուութիւնը միեւնոյն առիթով շնորհաւորական այցելութիւն տուաւ Պաղեստինի Բարձր Գոմիսէր Ն. Վ. Սըր ձօն Բօլլըրթ Զէնսըլթրին:

9 Յունիս 1929, Կիրակի, ժամը 9,30ին Գահիրէն երուսաղէտ ժամանեցին Եթովպացի չորս նորընծայ Եպիսկոպոսներ: Տեղւոյս Հապէշ վանքի Տեղաւորութեան կողմանէ եղած հրաւերին վրայ, Հոգ. Տ. Գեորգ Վրդ. ձանարկեան ի գիմաց Պատրիարքարանիս կայարան երթալով, բարի գալուստ մաղթեց նորևի Եպիսկոպոսներուն:

12 Յունիս 1929, ԳՇ., առտու ժամը 11 ին, տեղւոյս Հապէշաց Միաբանութեան Մեծաւորին առաջնորդութեամբ և իրենց հեռուորդներով Պատրիարքարանիս այցելեցին Եթովպացի նոր ձեռնադրուած Գեր. Տ. Աբրահամ, Տ. Իսահակ, Տ. Պետրոս և Տ. Միքայէլ Եպիսկոպոսներ: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, իր շուրջն ունենալով Լուսարարապետ Գեր. Տ. Մեսրոպ Սրբազանն ու վարդապետներ, սիրալիբ ընդունելութիւն մը ըրաւ, շնորհաւորեց իրենց բարձր աստիճանը, և սրտագին բարեմաղթութիւններ ըրաւ իրենց յաջողութեան համար: Տեսակցութիւնը տեւեց գրեթէ կէս ժամ: Մեկնումի պահուն, Հապէշ Եպիսկոպոսները ձունկի եկան և օրհնութիւնը խնդրեցին Ս. Պատրիարքին, որ Պահպանիչով օրհնեց զիրենք, կրկնելով իր բարեմաղթութիւնները: Ապա Լուսարարապետ Սրբազանի առաջնորդութեամբ Իշան Ս. Յակոբայ Մայր-Տաճարը, և իրենց ուխտը կատարեցին ու աղօթեցին Ս. Գլխաղբի մատրան մէջ և մեկնեցան:

13 Յունիս 1929, Հինգշաբթի, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, կրկնով կուրծքին վրայ Եթովպական Աստուծոյ Մեծ Պատուանշանը, և հետն ունենալով Լուսարարապետ Գեր. Տ. Մեսրոպ Սրբազանը, և Տ. Տրդատ և Տ. Կիւրեղ Վարդապետները, միաբարձ այցելութիւն տուաւ Հապէշ չորս Նորընծայ Եպիսկոպոսներուն, քաղաքիս հապէշական նորէն հիւրատան մէջ: Հապէշ Եպիսկոպոսները յառաջիկայ շաբթու սկիզբը պիտի մեկնին Եթովպիա և միասին կը տանին Ամեն.

Ս. Պատրիարք Հօր շնորհաւորական մէկ Կոնդակը, ուղղուած Եթովպիոյ վեհապետ Նէկիւս Թաֆարիի, չորս Եպիսկոպոսներուն ձեռնադրութեան առթիւ:

Եթովպիոյ եկեղեցին՝ իրրև հողի օր պետ՝ Արքեպիսկոպոս մը ունի, որ կը նշանակուի Եգլպատոսի Ղպտի պատրիարքին կողմէն և կը ձեռնադրուի: Գահիրէի Ղպտի պատրիարքը Եթովպիոյ Արքեպիսկոպոսը ձեռնադրելու առթիւ՝ Եպիսկոպոսութեան աստիճանին բարձրացուց նաև չորս Հապէշ հոգևորականներ, որոնք Գահիրէ գրեւորած էին Եթովպիոյ վեհապետին կողմէն: Այս ձեռնադրութեամբ Եթովպիոյ եկեղեցին առաջին անգամ է որ կ'ունենայ Գլխալ Արքեպիսկոպոսէն զատ բնիկ չորս Եպիսկոպոսներ, որոնք իրենց վեհապետին կողմէն Առաջնորդ պիտի նշանակուին չորս թեմերու վրայ: Կ'ըսուի թէ Եթովպիա պէտք ունի աւելի թուով Եպիսկոպոսներու, բայց առայժմ պիտի գոհանայ այս չափով:

Համբարձման տօնը կատարուեցաւ Յունիս 13, ԵՇ., գիշերային հսկումով և ժամերգութեամբ, ըստ աւանդութեան, Զիթենեաց լիբան աւերակ Սրբալայրի մէջ, Յոյներու, Ասորիներու, և Գլխալներու հետ միասնաբար:

Նուստիատի թափօրին նախագահեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը: Պատարագիչն էր Բարգէն Սըրբազան, որ աւուր պատշաճի քարոզն ալ տուաւ:

Տեղացի թէ ուխտաւոր, Հայերու ստուար բազմութիւն մը ներկայ էր Ս. Պատարագին, որոնցմէ ոմանք հաղորդուեցան:

Շուէտի Կիւսթաօլ Է. Թագաւորին ծննդեան տարեդարձին առթիւ երուսաղէտի Շուէտական Հիւպատոսարանին մէջ ընդունելութիւն մը կատարուեցաւ Հիւպատոս Պրն. Խ. Լ. Larssonի կողմէն, Յունիս 15, ԵՇ. կէսօրէն ետքը: Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէն Պատրիարքական Փոխանորդ Գեր. Տ. Միքայիլ Եպ. Ազաւնուտի, Հոգ. Տ. Գեորգ Վրդ. ձանարկեանի հետ ներկայ գտնուեցաւ այս ընդունելութեան:

Լալթաքիոյ վերջին Տեսուչ Հոգ. Տ. Վահան Վրդ. Գէորգեան, Տօրէն Ժողովոյ կարգադրութեամբ Տեսուչ նշանակուեցաւ Բեթլեհէմի Ս. Աստուածածին վանքին, Հոգ. Տ. Աշոտ Վրդ. Սարգիսեանի տեղ, որ հրաժարեցաւ այդ պաշտօնի իր հիւանդութեան պատճառով, որով կը տառապէր տարի մը ի վեր, և Պերութ գնաց զարմանուելու համար Ամերիկեան հիւանդանոցին մէջ:

Ընծայարանի և Ժանգլուց վարժարանի Անգլիկներէն լեզուի և գրականութեան ուսուցիչ Հայր Պրիմէն, քննութիւններէ ետքը, արածուեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէն միամտայ արձակուրդով, մեկնել զէպի Ամերիկա, իր ծերունի ծրնոցայ տեսութեան: 1929—1930 դպրոցական տարին Հայր Պրիմէնի տեղ պիտի դասախօսէ Նիւ Եորքի Եպիսկոպոսականց Աստուածարանական դպրոցին նախկին Փրօֆէսորներէն Տըթ. Պօլըն-Գրն, որ Նիւ Եորքէն երուսաղէտ պիտի հասնի առաջիկայ Սեպտեմբերին:

Բարգէն Սրբազան, երկու ամսուան արձակուրդով և Պերութի համարով Եւրոպա մեկնեցաւ Յունիսի վերջին շաբթուան մէջ:

ՍԻՈՆԻ յաջորդ թիւերը միացեալ պիտի հրատարակուին Սեպտեմբերի մէջ: